ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Արմավիրի մարզ, Մեծամոր քաղաք, Վարչական կենտրոն, 2.4, Հեռ. 060656505 ,
info.metsamor@mta.gov.am

N **02010**
06 մայիս 2025 թ.

«ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՎԱՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն/տիկին Սիմոնյան,

Մեծամորի համայնքապետարանի կարիքների համար իրականացված ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի մանկապարտեզների համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/16 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում ընտրված (հաղթող) մասնակից է ճանաչվել Ձեր կազմակերպությունը՝ «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ն, որի հետ 03.04.2025թ. կնքվել է ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/16-3 ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի շրջանակներում հետագայում հատկացվել են ֆինանսական միջոցներ և 08.04.2025թ. ծանուցվել է համաձայնագիր:

Սակայն սահմանված ժամկետում՝ մինչև 30.04.2025թ. ներառյալ, Ձեր կողմից չի ներկայացվել հաստատված համաձայնագրի տարբերակը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 2.1.7 կետով սահմանված պահանջները՝ հայտնում ենք, որ «ՎԻ ԷՍ ՏԻ ՍՔԱՅ» ՍՊԸ-ի հետ կնքված անհրաժեշտ ապրանքների ձեռքբերման ՀՀԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-25/16-3 ծածկագրով պայմանագիրը 06.05.2025 թ-ից միակողմանի լուծվել է և հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պայմանագիրը կնքելիս ներկայացրել եք միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի տուժանքի տեսքով պայմանագրի և որակավորման ապահովումներ, համապատասխանաբար՝ 9,000.00 (ինը հազար) ՀՀ դրամի և 6,000.00

(վեցհազար) ՀՀ դրամի չափով, առաջարկում ենք հաշվի առնելով ներկայացված միակողմանի հաստատված տուժանքների 1.8 կետերով սահմանված պահանջները՝ 10 աշխատանքային օրվա ընթացում՝ մինչև ս.թ. 19.05.2025թ.-ը ներառյալ, ապահովել նշյալ գումարների փոխանցումը՝ Մեծամորի համայնքապետարանի ՀՀ Ֆինանսների նախարարությունում բացված հատուկ գանձապետական հաշվին(900335239373):

Վերոնշյալի վերաբերյալ Մեծամորի համայնքապետարանը դիմել է նաև Ձեր կազմակերպությանը սպասարկող բանկին՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին:

Միաժամանակ հայտնում ենք, որ վերոնշյալ գանձումների անհնարինության դեպքում Մեծամորի համայնքապետարանը վերոգրյալի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրելու է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կատ. Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ՝ Ն. Հակոբյան
+37498393676